

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ


ԱՄՍԱԳԻՐ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

1887

ԹԻԻ I

ՄԱՐՏ



Ս. ՊԵՏԵՐՅՈՒՐԳ.

Ի. Ն. ՍԿՈՐՈՒՌԻՈՎՍԻ ՏՊԱՐԱՆ

որ
Տ
[ձ
կ
լ
կ
ւ
շ
պ
ա
ա
ն
ա
[ձ
ր
ծ
կ
վ
ծ
ա
ն
ա
ռ
դ
դ

ԳՊՐՈՅԻ ՈԳԻՆ

Անտարակոյս մեղանից ամեն մէկը դիտած է, որ դպրոցը աշակերտի վերայ թողնում է մի որոշ հետք: Ո՛րքան լաւ է դպրոցը, այնքան եւս նրա թողած հետքը լինում է խոր և տեւում է երկար: Այս դպրոցը փչացնում է աշակերտների բնածին յատկութիւնները և միևնոյն ժամանակ չէ կազմում նոցա մէջ որ և է, նոյն իսկ վատ բնաւորութիւն, իսկ ընդհակառակը, լաւ դպրոցը աշակերտների բնութեան և վարմունքի վերայ այնպիսի դեղեցիկ հետքեր է թողնում, որ իսկոյն աչքի է ընկնում ամեն մի քայլում: Անշուշտ դա առաջ է գալիս ուսուցչից, բայց նախ և առաջ նոյն իսկ աշակերտներից, որովհետեւ ուսուցչի ազդեցութիւնն երեւան է գալիս ժամանակի ընթացքում, իսկ աշակերտներինը անմիջապէս: Այսինքն աշակերտը, առանց դիմադրութեան, կարծես բնազդամբ սկսում է նմանել իւր դպրոցական հասարակութեան թէ՛ սովորութիւններին, վարմունքներին, յատկութիւններին և թէ՛ կարծիքներին: Այս դէպքում ուսուցիչների աշխատանքը՝ նորեկին զերծ պահել այս ազդեցութիւններից՝ առանց հետեւանքի է մնում, որովհետեւ աշակերտների ազդեցութիւնն մշտական է, իսկ ուսուցչինը ընդհատուող:

Ենթադրեցէք թէ ուսուցիչը յաջողում է ազդեցութիւն ունենալ աշակերտի վերայ, նորան գրաւում է և վերջապէս համոզում է այս ինչ

տեսակ ուղղութեան հետեւելու, որին և հաւանութիւն է տալիս նոյն իսկ աշակերտը. բայց այս դէպքում էլ ուսուցչի բոլոր աշխատանքը ի զուրկանցնի, եթէ դորան համապատասխան չէ. դպրոցի ոգին. այն է՝ եթէ աշակերտների մէջ տիրող ազդեցութիւնն հակառակ է ուսուցչի տուած ուղղութեանն. ի հարկէ բացառութիւններ կարող են կազմել տոկուն, հաստատ բնաւորութեան տէր աշակերտները. բայց ընդհանրապէս դպրոցի ոգին, դպրոցական գաղափարները աւելի զօրեղ ազդեցութիւն են անում նորեկի վրայ, քան ուսուցչի ձեռնարկած բոլոր միջոցները:

Դպրոցը նման է ամբոխին: Սորա ղեկավարողներն էլ միշտ լաւերը չեն լինում, այլ երբեմն և ամենավատերը: Յաճախ լաւ բնաւորութիւնները դպրոցում փչանում են, կամքը և անձնական համոզմունքները ընկճվում են կրքերից, կամ կոպիտ ու յիմար նախապաշարումներից:

Եւստ անգամ դպրոցում, ինչպէս կոպիտ հասարակութիւններում, ոյժը օրէնք է դառնում, ու մարդիկ յարգանքով գլուխ են խոնարհեցնում նրա առաջ, ո՛վ որ աւելի ոյժ ունի և բաւականին յամառ բնաւորութիւն: Թէպէտ հաւաքական կամքը բռնաւորական է՝ բայց պէտք է իմանալ, որ նա այն դպրոցի հասարակական կարծիքի պարզ արտայայտութիւնն է, ուր մասնակցում են բոլորը կամ թէ մեծամասնութիւնը:

Դպրոցը մի կազմակերպուած մարմին է. նորա գոյութիւնը տեսում է այնչափ, որչափ նորա մէջ հոգի կայ, որը և իսկապէս շարժում է այդ մարմ-

նի բոլոր անդամները: Ընկերական ոգին հասարակական կեանքի պատկերն է. այնտեղ, ուր նա գոյութիւն չունի՝ նշանակում է հասարակութեան կեանքը կեղծիք է, և թէ նա ոչ մի ազդեցութիւն չունի, քանզի չունի և կենդանութիւն: Չպէտք է դիմադրել այս ընդհանուր կապի զարգացմանը, որը մի ամբողջ դպրոցի բոլոր աշակերտներին մը տաճել ու գործել է տալիս որպէս մի անհատի: Պէտք է պաշտպանել ընկերական ոգին, որ նա վերածնուի, ուստի և աշխատելու է, որ նա ծառայէ յօգուտ, բայց ոչ ի փաս դպրոցի աշակերտներին: Եւս ուղղութեամբ ուսուցչի պարտականութիւնն է ստեղծելու դպրոցի ոգին և զարգացնելու հզօր միացում, որը կազմակերպում կամ բարեփոխում է աշակերտներին փոքր առ փոքր, նոցա դպրոց մտնելու օրից սկսած: Եւսպիսով միայն կարող է ուսուցիչը զօրացնել և իր ազդեցութիւնը. բայց սա չէ նշանակում թէ ուսուցիչը իր ուղղակի անձնական ազդեցութիւնից պէտք է հրաժարուի, այլ ընդհակառակը դա միշտ իր տեղը ունի. բայց թէ լաւ հետեւանք չի ունենայ մատաղ սրտի վերայ ուսուցիչների յաճախ յարաբերութիւնները նոցա հետ: Որպէս փոքրիկ տունկը, ծառը չէ կարող միանգամայն յաջող ծաղկիլ, մեծանալ տերեւախիտ, հին ծառերի տակ՝ այնպէս էլ երեխան զարգանալու է միմիայն իր ընկերակիցների շրջանում, որ կարողութիւն ունենայ փորձելու իր մատաղ ոյժերը: Եւանց այն էլ, երեխան տանը թէ՛ վախի, սէրի, յարգանքի և թէ՛ այլ երեւոյթների ազդեցութիւնների տակ

Համարեա կորցնում է իր բոլոր անձնական եւ
 ռանգը, կորովը: Ուշ թէ շուտ երեխան աստի-
 ճանաբար պէտք է ոտի կանգնի. իսկ սորա հա-
 մար աւելի լաւ շրջանն ընկերականն է. բայց ե-
 թէ մենք երեխային զրկենք հասարակական կրթ-
 թու[թիւնից՝ այն ժամանակ նա ինքնաբերաբար
 անզուսպ կեանք սկսելով, շուտով կարող է շեղ-
 ուիլ ճանապարհից և հետեւապէս իւր բնութեան
 հանգամանքներով խիստ տխուր ու վատ հետե-
 ւանքների կարող է ենթարկուիլ:

Ղպրոցը աննկատելի կերպիւ մի բնական մի-
 ջոց է ներկայացնում երեխային՝ դուրս գալու ծը-
 նողական խնամակալութիւնից և մտնելու հա-
 սարակական, ընտանեկան և պետական անկախ
 կեանքը: Այստեղ, զպրոցում, նա վարժվում է
 հնազանդութեան, ազատութեան և ուրիշի և իր
 անձը յարգելու, և երբեմն թողնուելով իր ա-
 դատ կամքին, երբեմն ճնշուելով՝ նա փոքր առ-
 փոքր սովորում է ինքը իրան իշխելու, բարե-
 կարգելու, բառի բուն նշանակութեամբ, և այս
 է ահա իսկապէս դաստիարակութեան նպատակը:

Ղպրոցը ծառայելու է աւելի կրթութեանը
 (դաստիարակութեանը) քան դասաւանդութեանը,
 աւելի նորա անհատական քան մտաւորական զար-
 գացմանը, և այս հետեւանքին հասնելու համար
 հարկաւոր է հաւաքական կեանք: Որչափ լաւ, օ-
 րինակելի լինի ուսուցիչը՝ այնու ամենաւնիւ բը-
 նական չէ երեխայի կրթութիւնը միակ նորան
 յանձնելը: Երեխայի կրթութիւնը կատարեալ լի-
 նելու համար հարկաւոր է որ նա մօտ յարաբե-

քողթիւնների մէջ գտնուի իր պէս երեխաների հետ: Տնտանիքի գործը պէտք է լրացուի դպրոցով, աւելի ուղիղն ասած՝ դպրոցական ընկերներով:

Ուսուցիչը պարտաւոր է կազմելու, պահպանելու և առաջնորդելու իրան յանձնուած դպրոցի հաւաքական կեանքը: Այս բանը աւելի կարեւոր է, ինչու որ եթէ այդ հաւաքական կեանքը կազմուի առանց ուսուցչի ջանքերին՝ այն ժամանակ նա ուղղուած կը լինի ուսուցչի դէմ: Պէտք է ասել, աշակերտները առհասարակ անհաշտ աչքով են նայում ուսուցչին, և այդ պատճառով իրանց մէջ մի առանձին աշխարհ են կազմում, ուր նա, ուսուցիչը, չէ կարող մուտք գործել: Այս իրողութիւնը կրկնակի փնասակար է, որովհետեւ նա դաստիարակչից խլում է նորա ազդեցութեան զօրեղ միջոցներից մինը և այդպիսով առիթ է տալիս դարգանալու իր մօտ մի ոյժի, որը դէպքի բերմամբ, կարող է փչացնել բոլոր կրթական գործը:

Սորա առաջն առնելու համար պէտք չէ խիստ ծռռ ու մոռն միջոցների դիմել, որ աւելի վնասակար է, այլ ընդհակառակը աշխատելու է չը նեղել աշակերտներին, հեռու կենալ և թողնել ազատ, միայն թէ նպատակին հասնելու համար՝ ուսուցիչը պէտք է կարողանայ բնական կերպիւ նրանց վերայ ազդել, գրաւել իրան վարմունքով, մի խօսքով աշխատելու է զանազան հանգիստ ճանապարհներով իր աշակերտների հոգին դառնալ և վերջը այդպիսով յաղթել նրանց: Սի-

այն այս միջոցով կարող է ուսուցիչը նպատակին հասնել, այլապէս դպրոցը կը կորցնի իր բնական պատկերը:


Երեխաները մի յարկի տակ ժողովելը գեոբաւական չէ դպրոց լինելու, ինչպէս և մարդկանց պատահական ժողովը հասարակութիւն չէ կազմում: Դպրոցի հասարակական կեանքը, ինչպէս և ամեն տեղ՝ մարդկանց առօրեայ յարաբերութիւններից չէ կազմվում: այլ հարկաւոր է մի ընդհանուր օջախ, ընդհանուր գաղափար, որը ստեղծէր ու պահպանէր այս կեանքը:

Դաստիարակներն են դպրոցի այս գաղափարը: Երեխաները դպրոցից այնպէս չպէտք է դուրս գան, ինչպէս մտնում են: Հարկաւոր է, որ դպրոցը իր հետքը, պատկերը թողնի, այս պարտականութիւնը դաստիարակների վերայ է ընկած: Սարմնի իւրաքանչիւր անդամի կեանքը սերտ կապուած է ամբողջ մարմնի կեանքի հետ: Պէտք է ոգի ներշնչել մարմնի մէջ՝ սրպէս զի այդ կենդանացուցիչ ոգին անդամների մէջ էլ տարածուի: Այս պատճառով ամբողջ դպրոցի ոգին ստեղծելը աւելի կարեւոր է՝ քան ամեն մի աշակերտի վերայ դարձրած հոգսը:

Կարող է պատահել, որ ուսուցիչը դպրոցի յոռի վիճակը վերագրի աշակերտների վատ կողմերին կամ նրանց ծուլութեանն: Սակայն դա իրաւացի չէ: Մի պատուական ուսուցիչ ասած է. «տուէ՛ք ինձ անպիտան երեխաներ և ես յանձնեմ առնում նոցա դարձնել եթէ ոչ հրեշտակներ բայց լաւ երեխաներ»: Եւ իրաւ, նա զգում

Ար, որ նրանից է կախուած լաւ դպրոց ունենալ, և թէ ինչպէս դպրոցն է՝ այնպէս էլ երեխաները կը լինին:

Ուսուցիչը թէպէտ պատասխանատու չէ, թէ ինչ տեսակ երեխաներ են մտնում դպրոց, բայց նա պատասխանատու է նրանց մեծամասնութեան համար, թէ ինչ տեսակ են զուրս գալիս դպրոցից: Չկան անուղղայ երեխաներ, ինչպէս չկան և չփչացած երեխաներ. նրանցից և ոչ մէկը չէ կարող զերծ մնալ դպրոցի ազդեցութիւնից. բայց որպէս զի դպրոցը ազդեցութիւն ունենայ՝ նա պէտք է կենդանի լինի. իսկ նրան կենդանութիւն տուողը դաստիարակ ուսուցիչներն են, որոնք և կազմում են դպրոցի հոգին:



ԴՆԴԱՍՏԱՆԻ ԵՒ ԲԻՐՄԱՆԻՈՅ ԶԱՅԵՐ

«Սանկաւարժանոցի» մէջ մենք ներկայացնում ենք յարգելի ընթերցողներին մի համառօտ վիճակագրական տեղեկութիւն Հնդկաստանի և Ֆիրմանիոյ հայ գաղթականութեան վերայ, որը իր ներկայ թշուառ կացութեամբ՝ նիւթական, բարոյական և վիճակագրական տեսակէտից՝ կարծէք մի պատմական դառն հեգնութիւն է ներկայացնում երբեմն փարթամութեամբ յղփացած այդ հայ գաղթականութեան փայլուն վիճակի:

Եւթմի մեր օրերում, Հնդկաստանի բազմաթիւ հայ գաղթականութեան խղճուկ մնացորդը հետեւեալ վիճակագրական պատկերն է ներկայացնում:

1. Կալկաթա, որը յայտնի է մեզ իր անցեալ բազմաթիւ հարուստ և աղգասէր վաճառականներով, իսնի և մելիքի կոչում ունեցող ազգայիններով, այժմ ընդ ամենն ունի մօտաւորապէս . . . 120 տուն հայ:

Ըստեղ հայերը ունին մի եկեղեցի, որը բաւականին հարուստ է իր կալուածներով, ժողովրդին հովուում են երեք քահանայ, որոնցից սակայն միայն մէկն՝ Մինաս քահանայ Բարսեղեանն է շարունակ Կալկաթա գտնվում, իսկ երկուսը միայն մեծ տօներին են ներկայ գտնվում, և մնացեալ ժամանակը Պարսկաստանի թեմերն են այցելում: Քահանաները ուճիկը եկեղեցուցն են ստանում:

2. Չիչրա. Կալկաթայից շոգեկառքով երեք ժամ հեռաւորութեան վրայ է ընկած: Սա ունի 2 տուն հայ բնակիչ, մի հնագոյն եկեղեցի, սակայն առանց քահանայի:

3. Մատրաս 5—6 տուն չքաւոր հայ բնակիչ ունի, որոնք մատակարարվում են տեղի հայ եկեղեցու եկամտից. քահանան Տէր Աղիշէ Մկրտումեանն է:

4. Սինկափոր 7—8 տուն. միջին կարգի առևտրականներ և կալուածատէրեր: Ունին մի եկեղեցի և մի քահանայ՝ Տ. Սեղբեստրոս Յովհաննէսեան:

5. Ունգուշ (Բիրմանիա) 20—25 տուն. Ունին մի եկեղեցի և մի քահանայ:

6. Բոմբայ 4 տուն. Ունին մի եկեղեցի և մի քահանայ:

7. Բինակ 2 տուն. Ունին մի եկեղեցի և մի քահանայ:

8. Ճափա կղզի (Բատավիա) 2—3 գիւղում են ապրում հայերը: Սոքա ունին մի եկեղեցի և մի քահանայ: Այս և մի աւերակ եկեղեցի Սուրատի մէջ, Բոմբայի մօտերքը:

Ըմեն մի քաղաքում կամ աւանում, ուր մի քանի տուն հայեր կան, ինչպէս տեսնում է ընթերցողը, այնտեղ կանգնած է և հայկական եկեղեցի: Ընշուշտ մի քանի տանից բաղկացած ամեն մի հայ հասարակութիւն դժուար թէ կարող լինի իր համար առանձին եկեղեցու շինութեան ձեռնարկելու և դոցա ծախսերը հոգալու, որ մի 4—5 տան նիւթական կարողութիւնից խիստ բարձր է: Ուստի այս երեւոյթը ապացուցւում է նորանով, որ առաջ այն բոլոր վայրերը, ուր այժմ հայկական տաճարներ են կանգնած՝ բաւականին բազմաթիւ հայ բնակիչներ են ունեցած: Սոցա մեծագոյն մասը այս ու այն քաղաքի վաճառականութիւնը ընկնելու հետ ի միասին, որպէս առևտրականներ, գաղթած են մի այլ քաղաք, ուր ծաղկել է վաճառականութիւնը և այնտեղ բազմանալով դարձեալ կանգնեցրել են իրանց ազգային տաճարը: Եւսպէս նոքա, երկար ժամանակ թափառելով օտար հողի վրայ, և հետեւելով ժամանակի սովորութիւններին, փոքր առ փոքր մօտեցած են եւրապացիներին և նոցա հետ բարեկամական ու խնամութեան կապերով կապուելով խորթացած են հայ կեանքից և այդպիսով մաս մաս ձուլուելով անգղիացիների մէջ, իրանց

հետքը հայկական տաճարների համարեա տխուր աւերակներն են թողած, որոնք իբր կենդանի վկայ նոցա փառաւոր անցեալի՝ այսօր օտար, հեռու երկրում, միայն մի քանի օտարամոլ անհատ հայերի աղօթատեղի են ծառայում:

Հնդկաբնակ հայերի մէջ այժմ նիւթապէս ապահովուած են հանգուցեալ հանրահռչակ Սէթ Մարգարի եղբայրները ու ազգականները: Սոքա միանալով «Մարգարեան» մականունն տակ՝ շոգենաւային ընկերութիւն ունին հաստատած: Ընկերութեան շոգենաւները այժմ Չինաց Զուրերի մէջ են շրջւում: Սորանից մի քանի տարի առաջ «Մարգարեան» ընկ. շոգենաւները Մեքիկա էլ էին գնում, սակայն անգլիացիների մրցումից նեղուելով, այժմ միայն չինական ջրերումն են բանում:

* * *

Հնդկաստանի և Բիրմանիոյ հայերին մօտ ապագայում միանգամայն կորուստ է սպառնում, եթէ դորա առաջը իսկոյն չառնուի: Սոքա օր օրի վրայ կորցնում են իրանց ազգային ժառանգական բնազդումները և յատկանիշները. կորցնելով վրայ են իրանց մայրենի լեզուն ու ազգային կրօնական զգացմունքը: Եթէ այսօրուան օրս Հնդկաստանի ու Բիրմանիոյ հայկական սուրբ տաճարները դեռ մի քանի յաճախողներ, աղօթողներ ունին, դա հետեանք է ոչ թէ հայոց ազգային կրօնական զգացմունքի, այլ եկեղեցու սոսկ այն արտաքին կողմերի, որոնց մենք սովորաբար հայկական եկեղեցական ծէսեր ու սովոր

քուժիւններ ենք անուանում: Աորից կրկնում ենք. Հնդկաբնակ և բիրմանիաբնակ հայերի մէջ չ'կայ և այն կրօնական ազգային զգացմունքը, որ այսօր գէթ գտնվում է ամենուրեք ցրուած հայերի մէջ: Ուստի եթէ իրերի վիճակը արդի դրութեան մէջ մնայ, այն ժամանակ շատ շատ ուղիղ մի երկու տասնեակ տարիներ բաւեն, ինչ անցեալ դարու ու ներկայի սկզբում հայութեան մտաւոր վերածնութեան համար այնչափ տքնող Հնդկաստանի երբեմն փարթամ հայ գաղթականութիւնն քացի եկեղեցու տխուր աւերակներից իրան անգամ մի երկու կենդանի բուեր էլ չ'թողնի, իրանց նախնեաց վիճակի տխուր պատմական անցեալը ու ներկան ողբալու:

Ինչ ապագայ կարող է սպասել մի խեղճ, օտարամոլ հայ հասարակութեան, որը ընդ ամենն 1500 հոգի հազիւ կազմելով օտարութեան մէջ, հեռու հայրենի հողից ու ջրից՝ 9—10 մասերի են բաժանուած և որոնց միմեանց չէ կապում ու մօտեցնում ոչ մի շահ ու ոչ մի ընդհանուր կապ: Ազգային լեզուն ու ազգային կրօնն, որոնք իրանց աջակից ունենալով հայկական սովորութիւնները համարեա միակ միջոցն էին ներկայանում ազգութեան գաղափարի վառ պահելուն Հնդկաստանի և Ֆիրմանիոյ հայերի մէջ՝ իր թշուառ և յոյժ անշախաճնելի վիճակի մէջ է այժմ, եթէ չ'ասենք կատարեալ մոռացկութեան. դեռ թող մի կողմը անգղիացիների հետ օր օրի վրայ աճող խնամութիւնն և հետեապէս մօտ յարաբերութիւնները, որոնք առանց այն էլ ոչ պակաս նշանաւոր մա-

հուան հարուածներ են տեղացնում շարունակ հայութեան այդ մի անկեալ գաղթականութիւն կազմող մասի վերայ:

Այս ազգի այս կտրեւոր գաղթականութեան մնացորդը իր աւանդութիւններով ու մասամբ որ և է կալուածներով, հարստութիւններով ~~խալա-~~
~~կորոսայից ալապել~~ համար ի շահ հայութեան անհրաժեշտ է հնդկաբնակ հայերի առաջնորդութիւնն բաժանել Պարսկաստանի առաջնորդութիւնից, և հնդկաբնակ և բիրմանիաբնակ հայերի համար առանձին առաջնորդութիւն կամ վերջապէս յաջորդութիւն հաստատել անյապաղ:

Որովհետեւ այդ կողմը աւելի ազատ, քաղաքակրթուած երկիր է նկատուած՝ առաջնորդացուն կամ վերջապէս յաջորդացուն լինելու է լեզուագէտ, բարձր բարոյականութեան տէր, ջերմեռանդ, որ իր բոլոր ուշ ու միտքը դարձնելու է ժողովրդի մէջ վառ պահելու կամ աւելի լաւ ասած վարժեցնելու ու զօրացնելու նորա կրօնական—ազգային եռանդը: Միենոյն ժամանակ, անշուշտ, նորա գլխաւոր հոգացողութիւնն լինելու են դպրոցներ բացանելը և նոցա բարեկարգ վիճակի մէջ պահելը:


Առաջնորդի կամ վերջապէս յաջորդի նիւթականի վրայ հարկաւոր չէ մտածել, քանի որ կալեաթայի եկեղեցին իր հարուստ եկամտով լիովին կարող է հոգալ իւր բարձր հոգեւոր հովիւի ծախսը: Ուստի այս մասին գէթ ոչ մի խոչընդոտ չի կարող լինել:

Անտարակոյս հնդկաբնակ և բիրմանիաբնակ հայերի

ապագայ բարձրաստիճան հոգեւոր հովուի կենդրոնն լինելու է Վալկաթա, ուր խմբուած են երկրի բազմամիլիոն հայերը: Սոց կաթողիկոսարանի դրան միաբան՝ Վերտիչեպիսկոպոս՝ Եհայեանն, որը անցեալներս նուիրակութեան պաշտօնով Հնդկաստան էր գնացած՝ պատմում էր մեզ թէ հնդկաբնակ հայերը ընդհանրապէս մինչ այն աստիճան խեղճ գաղափար ունին Եւրոպացիի և առհասարակ հայ հոգեւորականութեան վրայ, որ որ և է վարդապետի կամ եպիսկոպոսի գալուստը իմանալով՝ հարց ու փորձ են անում միմեանցից, թէ արդեօք ժամանող հոգեւորականն մեր տէր բաբայից մե՞ծ է թէ փոքր:

Սեր լրագրութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում այս կենսական խնդրի վերայ:

Ս. Գ. Լաթիբեանց.



ԼԱԶԻՍՏԱՆԻ ՀԱՅԵՐ

Տրապիզոնի արեւելեան և հարաւային կողմընկած երկրում, որը Լազիստան անուն է կրում՝ կան տասնի չափ գիւղեր, որտեղ կիսով չափ թուրքացած հայեր էլ են բնակվում: Տեղացիք սրանց անուանում են Կէպէ հայեր, որոնց բընական գիւղերն էլ երկու լեզուով են յիշատակվում, օրինակ՝ Հասան Վարապետ, Սուստաֆայ Յակոբ, Լայն:

Ըստ հայերը մինչև 1858 թիւը երկու կրօն

էին դաւանում՝ Հայ ուղղափառ և Սահմեսական: Սրանք մկրտվում, հաղորդվում և պսակվում էին ծածուկ հայ քահանայի ձեռքով, բայց առ երեսս նրանց նիւթահը (տաճկաց ամուսնութեան խորհուրդը) կատարում էր և հոլան, ինչպէս և թաղում էր նրանց. իսկ յետոյ կրկին ծածուկ քահանայն էլ օրհնում էր գերեզմանը: Այդ կըրկնադաւանութեան հետեւողներին կային և բաւականին թուով յոյներ:

Սակայն սորանից մօտ 30 տարի առաջ, բարեյիշատակ Սուլթան Սէլիտի օրով ազատութիւն տրուեցաւ սրանց համարձակ դաւանելու իրանց քրիստոնէական կրօնը, բայց առանց անունները փոխելու: Գեռ մինչև հիմայ տաճիկ կառավարութիւնը սրանցից զօրք է ժողովում: Հայոց կէսկէաներից՝ այն է թուրք ձեւացող հայերից՝ այժմ քիչ են մնում, միւսները Ռուսաստան են գաղթած:

Գաղլաշեան Կարապետ քահանայն, որ այժմ ծերացած ու նիւթապէս խեղճ վիճակի մէջ է՝ բաւականին մեծ դեր կատարած է կէսկէաների մէջ իբր հովիւ:

Սա սորանից երկար տարիներ առաջ դիմած է եղել Պոլիս, ուր նուիրատուութիւններ ժողովելով՝ իր հօտի համար եկեղեցի և դպրոց է կառուցած, որոնցով օգտուել են և գաւառի բուն հայերը:

Ընցեալ տարի մայիս ամսին արժ. Կարապետ քահանայն Պոլիս գնալով դիմած է Սիաքեալ Ընկերութեանց, որ այս վերջինս օգնութեան

Հասնէ Կէսկաների գիւղական վարժարաններին. բայց, որպէս տեղեկացած ենք՝ Միացեալ Րնկերութիւնը սոսկ նիւթական միջոցի սղութեան պատճառաւ՝ մինչև այժմ չէ կարողացել կատարել իր պարտականութիւնը. թէև միենոյն ժամանակ նա անտես չէ արել այդ վարժարաններին կարողութեան չափ օգնելու խնդիրը:

Սրբազան Վարեգին եպ. Սրուանձտեանց առաջնորդ նշանակուելու օրից մասնաւորապէս իր հոգացողութեան տակ առած է և այս Կէսկաների խղճալի կրթական վիճակը. սակայն անկարող է մի շօշափելի գործ կատարելու, ըստ որում «պէտք անհրաժեշտ շատ, բայց գրամ երբէք»:

ՄԻ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Տրապիզոնի Բեֆ Կըմական վեճակի արևելք:

Թուրքիաբնակ հայերի առաջնակարգ առաջնորդութիւններից մէկն էլ, ինչպէս յայտնի է՝ կազմում է Տրապիզոնի թեմը, ուր առաջնորդ է նշանակուած գեր. Վարեգին եպիս. Սրուանձտեանցը:

Ըստ թեմի հայերի թիւը մօտաւորապէս հասնում է 45,000 հոգու: Սոցա կրթական վիճակը աննախանձելի է, մանաւանդ գիւղերի մէջ: Կան բազմաթիւ հայ գիւղեր, որոնք մէկը միւսի վրայ ողորմելի պատկեր են ներկայացնում և թէ միանգամայն զուրկ են որ և է զպրոցական հիմնար-

կուծիւններից: Այս կարգի գիւղերի թիւը անց-
նում է 30-ից: Մինչև վերջին ուսու-թուրքա-
կան պատերազմը, այս մի քանի տասնեակ գիւ-
ղերից փոքր ի շատէ ընդարձակ նկատուածները ու-
նէին իրանց սեփական վարժարանները. սակայն
պատերազմի ժամանակից տիրած աղքատութեան
պատճառաւ բնակիչները պարտքի տակ ընկնելով՝
ստիպուած են եղել պարտատէրներին յանձնել
մինչև անգամ իրանց հողերը և կաղնեստանները:


Այս վիճակի մէջ երկար ժամանակ նոյն իսկ
օրական պարէնի կարօտ մնալով, գիւղացիների մի
մասը դադրած են Մշակովի կամ ընդ միշտ բնա-
կուծիւն հաստատելով, մի այլ մասը փող շահե-
լու համար. իսկ գիւղերում մնացածները օր օրի
վրայ աւելի նեղուելով չքաւորութիւնից՝ ստիպ-
ուած երեսի վրայ են թողել թէ՛ եկեղեցիները
և թէ՛ վարժարանները: Ուստի զարմանալի չէ որ
նոյն իսկ դպրոցական շինութիւնները անխնամ
մնացած՝ օր օրի վրայ քանդուելու վրայ են:

Պատերազմից առաջ մի պարոն, Հայկունի մա-
կանունով, Տրապիզոնում և Հանա գիւղի մէջ
գիւղական դպրոցների համար մանուկներից վար-
ժապետներ էր պատրաստում, աւանդելով նոցա
տարրական առարկաներ. սակայն Պ. Հայկունու
հեռանալուց յետոյ գիւղական վարժապետները
այլ եւս չկամենալով տարեկան 60—100 ուր-
լիով ծառայել՝ առիթ են եղած դպրոցների փակ-
մանը. ըստ որում գիւղացի հասարակութիւնները
աւելի ոռճիկ տալու կարողութիւն չունէին. մա-

նաւանդ որ տարիների ընթացքում աղքատութիւնն աւելի առաջանալու վրայ էր:

Գալով առաջնորդանիստ Տրապիզոն քաղաքին՝ պէտք է ասած, որ նա էլ բաւականին կաղում է կրթական վիճակի մէջ: Կարողութիւն ունեցողները իրանց որդիքը ուղարկում են Երզրում մեծ. Գ). Սանաուրեանցի վարժարանը: Բացի մի քանի մասնաւոր վարժարաններից՝ Տրապիզոնում գոյութիւն ունին Սխիթարեանց և կաթողիկ Ֆրերների դպրոցները՝ ուր յաճախում են նիւթական միջոց ունեցող հայ աշակերտները: Եւնպէս որ ազգային դպրոցների բաժին մնում են աղքատ ծնողների որդիք:

Եւթմ գեր. Եռաջնորդը ջանքեր է անում տեղացի երիտասարդներից մի ընկերութիւն կազմելու: Եւս ընկերութեան նպատակը պէտք է լինի նիւթական միջոցներ հայթայթել թէ՛ թեմի գիւղական դպրոցների համար և թէ՛ նպաստելու Սիւսեան Ընկերութեանց կրթական գործին:



ՕՏԱՐԱԿՐՈՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՏ

Վ. իճապաղրական տեղեկութիւն:

ԵՅՆԹԵՊ ՔԵՂԵՐ

Ե. Բողոքականներ:—Եւնթապ Կիլիկիոյ կարեւոր քաղաքներից մէկն է: Սա այժմ յայտնի է որպէս օտար կրօնական մրցումների կենդրոն: Բընակիչներից 30,000 թուրք են. 8,000 բուն

ուղղափառ հայ. 3,500 հայ բողոքական, մնացեալը հայ կաթողիկ, հայ եպիսկոպոսականներ և եւրոպացիներ ու հրէաներ:

Ըստ քաղաքի մէջ են գլխաւորապէս կենդրոնացած Բողոքականները: Սոքա ունին մի գիշերօթիկ և ցերեկօթիկ բարձրագոյն վարժարան (կոլէժ): Ըստ վարժարանի աշակերտների մէջ Աիլիկիոյ գրեթէ ամեն քաղաքներից և մինչև իսկ Փոքր-Եսիոյ և Հայաստանի գաւառներից բազմաթիւ Հայ-Առևտուրչական աշակերտներ կան:

Այդէ՛ի իբր ամբողջացուցիչ մասը կազմում է բժշկական դպրոցը:

Ունին նմանապէս մի գիշերօթիկ և ցերեկօթիկ օրիորդաց բարձրագոյն վարժարան. բացի այս բարձրագոյն վարժարաններից, տեղւոյն բողոքականները ունին և վեց թաղային դպրոցներ թէ տղայոց և թէ աղջկանց համար:

Այնպէս հիմնած են մի հիւանդանոց ու մի տպարան՝ անգլիերէն և հայերէն տառերով:

Ըստ տպարանի արտօնութիւնը ստացուել է կառավարութիւնից Ա. Պոլսի ամերիկական գետնականի միջոցաւ:

Հայ-բողոքականների թիւը Ընթացիկ մէջ հասնում է 3,500 հոգու: Սոքա ունին երեք եկեղեցի: Բողոքական պրոֆէսորների մէջ 5—6 հոգի հայեր կան, որոնք իրանց կրթութիւնն Ըմբիկայի մէջ են ստացել: Սոքա ոչինչ չեն գործում բնդհանուր հայութեան տեսակէտից:

Բ. Աւստրիական հասարակութիւն: — Ընթացիկ մէջ

Հայ-կաթողիկէները թուով 50 տուն են: Չորս հինգ տարի կայ, որ այստեղ Պրանչիսկեան պատերնները հաստատած են մի եկեղեցի և մի դպրոց: Վարոցը յաճախում են 200-ի մօտ աշակերտներ երկու սեռից: Եւս աշակերտների մեծ մասը Լուսաւորչական-հայեր են:

Հռովմայ Պապի առաջարկութեամբ հինգ տարի է, որ հաստատուած է այստեղ մի ֆրանսիական դեր-հիւպատոսութիւն:

Բնիկ Հայ-կաթողիկէները եւս ունին մի դպրոց և եկեղեցի, որի շինութեանը նպաստած է Վապուէօն Վ. կայսրը: Սոցա դպրոցը յաճախում են մօտ 30 աշակերտներ:

Վ. Եպիսկոպոսական կաճ անգլիական Էկեղեցոյն պարկանող հայեր:— Երբեմն Սոյ կաթողիկոսական տեղապահ Սկրտիչ եպիսկոպոսի առաջնորդութեամբ կազմուած այս հերձուածն էլ 20—30 տունից է բաղկացած:

Ենգլիացիները սկզբում մեծ կարեւորութիւն տուին այս հերձուածին, բայց յետոյ տեղացի աղ-գայիներն մի քանիսի բացատրութիւնների վերայ՝ դադարեցրին իրանց նպաստները և հետեւաբար շինութեանը ձեռնարկուած եկեղեցին էլ կիսատ մնաց:

ՄԵՐՆԵՐ

Ե. Բողոքականներ:—Սրանք այստեղ էլ, ինչպէս և Ենթապի մէջ խիստ զօրաւոր են: Թը-

ւով մօտ 3,000 հոգի են: Բացի մի քանի թաղային դպրոցներից, սրանք ունին քարոզիչներ պատրաստելու համար մի աստուածաբանական վարժարան և մի կոլէժ օրիորդաց համար: Եկեղեցիների թիւը երեք է: Խնչպէս Լճնթաղի մէջ, Սարաշումն էլ կան ամերիկացի միսիօնարներ և օրիորդներ իբրեւ քարոզիչ և ուսուցիչներ:

Բ. Աւելորիկ հայեր:—Աւթուրիկ հայերը Սարաշի մէջ աւելի զօրաւոր և բազմաթիւ են քան Լճնթաղ: Սրանց թիւը մօտաւորապէս 4,000 հոգու է հասնում: Լճստեղ է դրանց եպիսկոպոսարանը: Լուսաւորչական-հայերի հետ շատ վատ են վարվում և այս պատճառաւ միմեանց հետ լարուած յարաբերութիւնների մէջ են գտնվում: Սրանք ունին մի քանի թաղային դպրոցներ: Լատին Ֆրանչիսկեանները գրեթէ 10—15 տարի է, որ հաստատած են այստեղ թէ եկեղեցի և թէ վարժարան օրիորդաց և տղայոց համար:

Լճնթաղի ֆրանսիական հիւպատոսութեան իրաւասութեան ներքեւ է նաեւ Սարաշ:

Գ. Եպիսկոպոսական կամ անգլիկական եկեղեցու պատկանող հայեր:—Լճստեղ էլ կայ այդ հերձուածը, որը վարում է բողոքականութիւնից հրաժարուած մի քարոզիչ: Սա ունի իրան մօտաւորապէս 100 առն հետեւողներ:

ԼՏԵՆԸ

Բողոքական-հայերը այստեղ էլ ունին մի բարձրագոյն դպրոց և երկսեռ վարժարան: Սրանց մտաւորապէս թիւը հասնում է 2,000 հոգու: Կաթոլիկ և եպիսկոպոսական հայեր այստեղ էլ կան, բայց այն կարեւորութիւնը չունին քան որ ունին վերոյիշեալ երկու քաղաքների մէջ:

Սալաթիա, Լտի-եաման, Օւլթուն, շաճին, Սէրսին, Պէյլան, Բայաս, Բիւլիս, Լնտիոք, շալէպ, շայ-լեռ և համարեա բոլոր նշանաւոր գիւղերի մէջ միտինարները քարոզիչներ և դըպրոցներ հաստատած են: Եւս բոլոր դպրոցների թիւը հասնում է մինչև 50-ի, որոնց ծախսի մեծագոյն մասը Լմերիկայիցն է հոգացվում: Տեղացիք էլ տեղ տեղ մասնակցում են ծախսերին:

Եւթմ կաթոլիկութիւնը բողոքականութիւնից քիչ է ծաւալում: Սորա պատճառը այն է, որ կաթոլիկութիւնն հիմա մեծ կարեւորութիւն չէ տալիս դպրոցներին: Բողոքականները այժմ սկսած են ծաւալուիլ գիւղերի մէջ էլ, ուր իսկոյն եկեղեցու և դպրոցի հիմնարկութեան են ձեռնարկում: Սերջին ժամանակները աւելի տարածվում են շայ-լեռան կողմերը և Լմանոսի ու Լնտիոքի հայ գիւղերում:

ԹՈՒՐԲԻՈՅ ԵՒ ԱՌԱՆՁԻՆՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Եւրբ աղգի կամ ժողովրդեան վիճակի վրայ կը
խօսուի, ընդհանրապէս կը նկատուի երեք բան.
աղգին կամ ժողովրդեան 1. Նիւթական, 2. Բա-
րոյական, և 3. Իմացական վիճակն: Եւս երեւբ
կը զանազանի, ինչպէս անհատ անհատէ, նոյնպէս
աղգ աղգէ և ժողովուրդ ժողովուրդէ: Տայտնի է
թէ Թուրքիոյ Հայ ժողովրդեան նիւթական վի-
ճակն, ընդհանրապէս խօսելով, չկարէր լինել
տարբեր երկրին ընդհանուր նիւթական վիճա-
կէն: Եւրդ, ներքին և արտաքին դժբախտ պատ-
ճառներ արարին այնպէս, որ Թուրքիոյ ժողո-
վուրդն աղքատացաւ: Ոչ սակաւ անհատ մարդիկ
և ընտանիք որ 10 կամ 15 տարի առաջ էին
գոյաւոր, այսօր հազիւ կարող են հայթայթել
իւրեանց օրապահիկն: Թերեւս ասեն ոմանք թէ,
եթէ ոմանք անկանին, այլք փոխանակ նոցա կը
կանգնին. բայց դժբախտաբար հոս, եթէ կանգ-
նողներ կան եւս, սոցա թիւը շատ նուազ է քան
առաջիններունը: Օխարդ և իցէ, այս մասին ա-
ւելի խօսել արտաքոյ է մեր նպատակին. և իմ
գիտաւորութիւն էր սաչափ միայն իմացունել թէ
Թուրքիոյ, և առանձինն Կոստանդնուպոլսոյ Հայ
ժողովրդեան նիւթական վիճակն չէ բարւոք քան
զոր էր իբր կէս, նաև իբր քառորդ դար յառաջ:
Բայց աւելի ցաւալին է այս ժողովրդեան բարո-
յական վիճակին անկումը, քանզի նիւթականը

Թերեւս սակաւ ժամանակի մէջ փոխուի, բայց ոչ նոյնպէս գիւրաւ կը փոխուի բարոյականը: Սմ կարծիք այս մասին Թերեւս սխալ լինէր, եթէ ուրիշ շատերէ չլսէի յաճախ գանգատներ, թէ Կոստանդնուպոլսոյ Հայ ժողովրդեան մէջ առաւել- լապէս ընկերական առաքինութեանց գլխաւորն, պարտականութեանց ճանաչումն, կը պակասի օր ըստ օրէ: Սաչափ գոնէ ճշմարիտ է թէ հաւա- տարմութեան կամ ուղղութեան, որ հիմն է ըն- կերական յարաբերութեանց, գէմ մեղանչել սկսած է իբրեւ հարկ համարուիլ այս առ մեզ. շատերուն բերնէն կը լսենք թէ առանց խարդախութեան, խաբէութեան, ստութեան ապրել այս երկրին մէջ անհնար է: Եւ մէն ընկերական յարաբերութիւն, առեւտրական, ընտանեկան, ամուսնական, յայտնի կամ լռելեայն դաշինք է, որ եթէ չպահուի խղճի մտօք, կը բերէ խանգարումն: Հատեր այս խան- գարման զառիվայրին վրայ կը տեսնեն Կոստան- դնուպոլսոյ Հայ ժողովուրդը, և այսմ պատճառ կը համարին աղքատութիւնը: Սոցումն բարուց զեղծման պատճառներէն մին կը համարէր աղքա- տութիւնը: Հիմա եւս կը կարծուի թէ աղքատու- թիւնը սովոր է բթացունել արգարութեան և ուղղութեան զգացումը, և կը տանի սոսկալի ան- բարոյականութեան, մինչև իսկ մեծամեծ ոճիրնե- րու: Բայց այս եթէ ճշմարիտ է, ժողովրդեան ստորին խաւերուն համար ճշմարիտ է. բայց մեր մէջ զեղծումը ժողովրդեան բարձրագոյն կարգին մէջ աւելի տեսնուեցաւ մօտ ժամանակներ: Եւ իբ- մեր զեղծումը կ'ընծայեն օրինակի: Եւրպրե օրի-

Նախի ազդեցութիւնն հօր է, և այս երկրին մէջ մանաւանդ ի մայրաքաղաքիս, մեծագոյն աղքատ կամ միջակ մասի մը մօտ և նորա աչաց առջև կայ փոքրագոյն մաս մի յետին աստիճան շուայլ և զեղիս: Բնական է, ասե՛ն, մարդոյ որ և իցէ ճանապարհաւ ջանալ հաւասարել քան զինքն վերագունից: Բայց այս չարդարացունքն, քանզի ոչ թէ օրինակին է յանցանքը, այլ նորա որ, զուրկ բարոյական սկզբունքէ, օրինաւոր կը համարի ամէն միջոց, եւս և կարի ապօրինաւորն, հաւասարելու համար վերագունից: Ղարձեալ այլք Եւրոպայի հետ մեր յարաբերութեան, որ այժմ աւելի է քան կէս կամ քառորդ դար յառաջ, կ'ընծային զեղծումը: Բայց այսու եւս չենք արդարանար, կը ցուցնենք մանաւանդ թէ չունինք բարոյական ընտրութիւն, զի թողլով այնչափ բարբառներ զորս ունի Եւրոպա՝ կը նմանինք յոռինութեան: Ուրիշներ, կրօնական տեսութեամբ նկատելով, մեր բարոյական ապականութեան աղբիւր կը համարին նիւթականութեան (matérialisme) կամ ինչպէս կը կոչեն ոմանք նախատական անուամբ, անհաւատութեան գաղափարաց ճարակ գտնելն: Այ ժողովրդեան գրեթէ բոլոր խաւերուն մէջ: Բայց ընկերական առաքինութեանց սկզբունք չեն հաւատոյ մաս. այս սկզբունք այնպէս յայտնի և գործնական են, որ մարդիկ, որ և իցէ փիլիսոփայական դրութեան հետեւելով՝ իրաւունք չեն ստանար ազատ կացուցանել զանձինս ընկերական պարտականութիւններ յարգելէ: Բնկերական մարդը՛ն ինչ փիլիսոփայական կարծիք և ընդունի,

պարտի գիտնալ թէ է միշտ ընկերական մարդ, և իբրև այսպիսի պարտի մնալ հաւատարիմ իւր յարաբերութեանց, և թէ՛ ինչպէս ծանրութեան, շարժման, լուսոյ, ելեկտրականութեան բնական օրէնք, նոյնպէս բարոյական օրէնք ուղղութեան, արդարութեան, և ինչ, են իրական և յաւիտենական, ուստի և անեղծանելի, և չեն կրնար արհամարհուիլ առանց մեծ նիւթական փնտսու։ Ամեն անհատ կամ ժողովուրդ որ չյարգեր զայս ճշմարտութիւն, նովին կը ցուցնէ թէ չէ բարւոք դաստիարակուած, և է տգէտ իւր ընկերական կոչման։ Այս յիրաւի է ոչ զայլ ինչ բայց միայն զտգիտութիւնն համարել պատճառ մեր բարոյական զեղծման։

Թուրքիոյ Հայ ժողովրդեան բարոյական վիճակին վրայ այս նկարագրէն ինքնին կը հետեւի թէ քան զայն լաւ չէ իմացականն։ Միջոցք որովք ժողովուրդ մի կրնայ պատրաստուիլ բարձրագոյն մտաւոր վիճակի՝ կը պակասին առ մեզ։ Կրօնի, բարոյականութեան, ընկերականութեան, քաղաքականութեան, գրեթէ ամէն բանի վրայ դարուս սկզբունք նոր են բոլորովին, մենք հոս տակաւին հին։ Աորը հնոյն վրայ չկրնար կարկատուիլ, և ոչ նոր գինին կը դրուի հին տիկերու մէջ։ Ո՞վ պիտի պատրաստէ մեր արդի սերունդը նոր սկզբանց։ Բեմը թէ մամուլը։ Մըտիթարական է սակայն որ Թուրքիոյ Հայ ժողովրդեան մէջ կայ բաւական մեծ խորհող մաս մի որ կը զգայ երկրիս հայ ժողովրդեան այս վիճակը, և չէ անհոգ դարման տանելու այնմ ըստ նե-

քելոյ ժամանակին և պարագայից: Աւելի մեծ անձնանուիրութեան կարօտ ենք սակայն, և յայտն օրինակ կ'ընծայեն մեզ Յոյնք:

Թորթիս Բնակող Հայ ոհ



«ԱԶԴԱՐԱՐ» ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐԸ ԵՒ ՆՐԱ ԽՄԲԱԳԻՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅ ՇՄԱ- ԻՈՆԵԱՆ

Անցեալ դարու նշանաւոր ազգային գործիչների, բարերարների, մանաւանդ գրական շատ գործերի վրայ արդի Հայ գրականութեան մէջ այնչափ քիչ ու կցկտուր տեղեկութիւններ են գտնվում, որ ժամանակն է վերջապէս դոցա վրայ ևս ուշադրութիւն դարցնել ու օր առաջ աշխատել երևան հանելու աստ ու անդ թաղցուած գրական և կենդանի աղբիւրներից:

Այժմ երբ մեր գրականութիւնն իւր զարգանալու ճանապարհի վերայ է, կարծում ենք, նպատակայարմար է անուշադիր գտնուել դէպի մեր մօտակայ անցեալը և նրան առանց ուսումնասիրութեան թողնելը ըստ որում եթէ չ'ուսումնասիրենք մեր անցեալը, չ'րարեութենք ներկան, անկասկած չի լինի և ապագան:

* * *

Սորանից մօտ երկու ամիս առաջ, Պոլիս գտնուելիս՝ բարեբաղտութիւն ունեցանք տեսնել Արժ. Սըկ-

րեան Հօր մօտ հայոց անդրանիկ «Մզդարար» ամսագիրը, երեք տարուանն միասին կազմուած: Անշուշտ մեծ բաւականութիւն է պատճառում հայ մարդին, երբ նրան յաջող առիթ է ներկայանում թերթել 93 տարի սորանից առաջ լոյս տեսած իր մայրենի լեզուով մի պարպերական հրատարակութիւն, ուր իւր անցեալով հետաքրքրուող հայի առաջ պարզօրէն երեան է գալիս ժամանակակից հայ կեանքը իր բազմատեսակ մռայլ կողմերով:

Մէքիզ առաջ ունենալով «Մզդարարը» և խորը թափանցելով ժամանակակից հայ կեանքի ներսը, իսկոյն տեսնում ես, թէ ինչպէս համատարած հայութիւնը Վանդէսի ափերից մինչև Նեալի ափերը խաւարի ու տղիւթութեան մէջ է մրափած, և միայն մի քանի անհատներ աստ ու անդ դեպերելով, յուսահատ հառաչում են ընդհանուր վիճակի վրայ և դոցանից համարեա ոչ ոք իւր մէջ ոյժ ու կարողութիւն չէ զգում ժողովրդի մահաքունը ընդմիջելու: Մհա այդ ժամանակն է, ինչ հայ եկեղեցւոյ հարադատ պաշտօնեայ Տէր Յարութիւն Շմաւոնեանը վեհ աւանդութիւններով հրապարակ է նետվում ու իր ամսագիր «Մզդարարը» հիմնում:

«Սակայն որպէս միշտ տարաբաղդապէս դէպ լինի ի միջի մերում ի պակասութենէ յարմարաւոր անձանց վախճան առնուլ գործոյն ընդ սկզբնաւորողին. սոյնպէս և տպագրութիւն Սատրապայ գողցես վախճան առնուլ ընդ բարիչեշատակ առնս ազգասիրի»:

«Մզդարարը» հրատարակվում է 1794 թուա-

Վանից թիրայ ամսից (յուլիս) Վոլկաս կաթողիկոսի հայրապետութեան օրով, «Բնդ հովանեաւ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն որ ի Սատրաս. ի տպարանի Տէր Յարութիւն քահանայի Շմաւոնեան Շիրապեցւոյ:

* * *

Եւաջին գիրքը սկսվում է ազդով առ «Բարեպաշտ պարոնաց և մաքրակենցաղ տիկնանց Սատրասիս Հայոց»:

Եւստեղ հայոց անդրանիկ խմբագիրը յայտարարում է, որ ամսագիրը դուրս է գալու ամեն մի ամսի վերջին, որի մէջ «խմացումն լինելոց է ընթերցողաց ծայրաքաղ անցքն նոյն ամսոյ ի զանազան կազմաց, քարտեզաց և գրոց, նաև բանք հարկաւորք և քաղցրալուրք, և ի վերջնումն տետրակիս զօրացոյց մի հետեւեալ ամսոյ պարունակեալ ի նմա զտօնս սրբոց և զաւուրս ծննդեան և լրման լուսնոյ և լն» «Վինն տետրակի մի հուն հաստատեցի». ի Սատրաս ի Վամար (մայիս) ամսոյ 20, 1794 թուականի:

Եղգարարին աշխատակցած է Ուոլսաստանից Յովսէփ արքեպիսկոպոս Երզնութեանց և Ստեփաննոս Յովհաննէս Վուլամիրեան (զոր բնակի ի հարաւային առտն մօտը Բստիֆան պապամին):

«Սրբոյ և Սէծի աթոռոյն Լջմիածնի ծայրագոյն Եւստիակոս Ուոլսայ երկրի ամենայն հայոց ազգին Եւաջնորդ հիմնադիր Եւր-Եւսիփեանայ և Վրիգսրուպոլսու Յովսէփ արքեպիսկոպոսը» գրում է ժամանակակից քաղաքկան անցքերի մասին ի Կովկաս և Ենդրեկովկաս.

Նոյնպէս տպուած կայ և Գրիգորիայուլիս քաղաքի շինութեան կայսերական հրովարտակը.

1795 տարեշրջանի մէջ տպուած կայ Յովսէփ եպիսկոպոսի կնիքը. Սիջին Ս. Լստուած Յիսուս գրկած, փոքր ինչ վերը գտնվում է եպիսկոպոսական գլխարկը, իսկ դորանից վեր կայսերական թագ:

1796 տարեշրջանն սկսվում է Ովդան (նոյեմբեր) ամսով. Լուսին տարեշրջանի առաջին գրքում ասուած, է որ «տպարանն մեր և դպրոցն յ'օր է յօր ծաղկի, յառաջանայ և պողաբերէ 1793 թ.»:

* * *

Հայոց առաջին խմբագիր—հրատարակչի բարեյիշատակ Յարութիւն քահանայ Շմաւոնեանի վերայ, հայազգի գրագէտ Թադէոս Լւետումեանն իւր «Լրամայիս» վերնագրով հրատարակութեան մէջ հետեւեալն է հաղորդում. երես 118—120.

«Տէր Յարութիւն Շմաւոնեան Շիրազեցի ի քահանայութեան պատահեալ տարաբաղդութիւն կորուսանէ ղերկուս որդիս ի միջոցի միոյ շաբաթու և առ ցաւոց սրտին առանձնացեալ ի լեառն Բաբաքուայ, կեայ ընդ գերվիշաց իբրև եօթն ամաց միջոցաւ:

Լեառնս այս հեռի է ի Շիրազայ իբր երկուց ժամուց ճանապարհաւ, յստորոտս որոյ է գերեզմանատուն ազգիս: Լստ ի վերայ լերինս միտ զնէ աշխատասէր քահանայս պարսկականին բարբառոյ, յորում ըստ ունակութեան ազգիս հանգիսանայ

գերազանց: Օգնի ժամանակաց տեղի տուեալ բոլորն թախանձանաց ընտանեաց, իջանէ ի միւս անգամ ի քաղաքն և անտի ելեալ գնայ ի Սադրաս քաջանայագործութեան պաշտօնաւ:

Տարականոն սովորութիւնք պատմեալ գրահանայէս, երևեն ընկալեալ գոլ ի դերվիշաց աստի: Եսի զամանէ ոչ ներել եկաց կարօտաւորաց շրջել առ դուրս վասն հաւաքելոյ զտուրս, այլ յորդորել զնոսա յաշխատութիւն և ի միում նուագի կերտել տուեալ զսափոր, առաքել ի տունս մեծատանց, որով և հաւաքել զառատ տուրս վասն կարօտաւորին Լմենարարի օրինակ ընդհանուր գործածութեան:

Ի վերջ ութ և տասներորդ տարու սկսանէ զտպագրութիւն «Եղգարարի», որպէս և այլոց մատենից. սակայն որպէս միշտ տարաբաղտապէս դէպ լինի ի միջի մերում ի պակասութենէ յարմարաւոր անձանց վախճան առնուլ գործոյն ընդ սկզբնաւորողին. սոյնպէս և տպագրութիւն Սատրասայ գոգցես վախճան առնուլ ընդ բարեյիշատակ առնս ազգասիրի:

Ի շնորհս գերազանց գիտութեան Պարսից բարբառոյ արժանանայ ազգասէր այրս շնորհաց Սալաջայ Սահմատալի խանի Նաբաբէն Երկաթայ և Սատրասայ հրաման ընկալեալ ի նմանէ տպագրել և զպարսկերէն և զարաբերէն մատենս, զորոյ հրամանագրին պատճենն տեսաք պարսկի և արաբացի գրով դրոշմեալ ի մէջ 253 և 254 էջաց յիշեալ «Եղգարարի»:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

1. Տեղեկագրութիւն Սիվրի-Հիսարու (Գաղատիոյ վիճակ.) աշխատասիրութեամբ Նաթան Պօղոս վարդապետի:

Բ. աշխատութիւն Հեղինակին: Պոլիս Լնդրանի վարդանեանի տպարան, 1872: 16° 22 էրես: Գին 2 ղուրուշ:

Հեղինակը մնացել է Սիվրի-Հիսար 5 ամիս և տեղեկագրած է «Հոն բնակող աղագյնոց վիճակը, թիւը և ուրիշ ազգաց բնթացքը ու քաղաքին դիրքը, ևլն»:

2. Նոյն Հեղինակի Գ. աշխատութիւնն:

Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Գաղատիոյ (Անդոք): Լայկելութեամբ Հեղինակին: Պոլիս 1873. տպարան Հարութիւն Սարգարեանի: 8° 78 էրեսէ, բացի մեծածաւալ վիճակացոյցից:

Տեղեկութիւնքը «միայն չորս վիճակաց, այսինքն՝ Գաղատիոյ, Սղանօզի, Նալլը-Խանի և Լֆիօն-Գարա-Հիսարի վրայօք է» և ոչ Գաղատիոյ ընդհանուր վիճակի վրայ: Լայս գրքի մէջ «ի դիր է առնուած քաղաքաց դիրքը, Ժողովրդոց թիւը, բնաւորութիւնը, սովորութիւնը, ընկերական ընթացքը, նիւթական և բարոյական կացութիւնը և ուրիշ ազգաց հետ ունեցած յարաբերութիւնն, ևլն»: Գրքի վերջը Հեղինակը «վիճակացոյց ալ դրած է որ լովանդակ Գաղա-

տիոյ վիճակը կը ներկայացնէ և Վաղատիայէն ու նեցած Ժամական հեռաւորութիւնը կը ցուցնէ»):

3. 'Նոյն հեղինակի Ղ. գործը:

Տեղեկագիրը ընդհանուր վիճակին Սերաստիոյ և անոր կուսակալութեան ներքեւ գտնուող մէկ քանի քաղաքաց: Պոլիս 1877. տպագրութիւն Հայաստանեայց:

Հեղինակը «ազգային Կեդր. Խառն Ժողովոյ որոշմամբ և Բարձր. 'Ներսէս Ս. Պատրիարք Հօր կոնդակաւ» ուղարկուած է եղել 1875 թ. սեպտ. ամսոյ վերջերը Տիվրիկ, տեղւոյն ազգայնոց մէջ ծագած խռովութիւնը քննելու և տեղեկագրելու Ս. արչութեան:

«Պաշտօնս ի գլուխ հանելու նպատակաւ՝ չորս ամսոյ չափ Սերաստիոյ Ս. 'Նշան վանքը սպասելու ատենս՝ ուղեցի միանգամայն չորրորդ ծառայութիւն մ'ընել ազնիւ ազգիս՝ լի ու լի տեղեկագիր մ'ալ պատրաստելով երբեմն Հայոց Սերաստիոյ Թագաւորանիստ քաղաքի ազգայնոց վըրայ, նախ թէ՛ քաղաքին և շրջակայից բնակիչ հայերը Հայաստանի ո՞ր մասէն և ո՞րչափ ատենէ և ինչո՞ւ համար գաղթած են հոն և նկարագրելով ընդ նմին քաղաքի դիրքը, բնակչաց թիւը, բնաւորութիւնը, սովորութիւնները, ընկերական կեանքը, նիւթական և բարոյական վիճակը և ուրիշ ազգաց հետ ունեցած յարաբերութիւնները և նոյն վիճակին մէջ գտնուած վանօրէից որքանութիւնը և բարեկարգութիւնը, ևլն»:

«Իբրեւ մասնաւոր ծանօթութիւն կը փութամ յաւելուլ և զայս, թէ մինչև հիմա ուր որ այ-

ցելուծեան պաշտօնով հանդիպեցայ ազգայնոց՝ տեսայ որ բոլոր անոնց առաջին գաղթականութիւնը մեր հայրենեաց Մնի մայրաքաղաքէն և եթ կը սերի, ազգային պատմութիւնն և մասնաւորաց պատմական գրուածք միահամուռ՝ մեր մըտքերն յիշեալ երբեմն բազմահայ քաղաքը կ'առաջնորդեն՝ ազգիս ի սիւիւռս ցրուելուն պատճառը անոր աւերման արկածից մէջ գտնելու»:

Յոյժ կարեւոր ենք գտնում արտագրել ամբողջովին այս գեղեցիկ աշխատասիրութեան վերջին մի հատուածը, որի վերնագիրն է «վախճան գործոյ»:

«Այս չորրորդ աշխատասիրութեամբ ալ Սեբաստիոյ, Եւդոկիոյ, Լմասիոյ վիճակաց վրայօք սիրելի ազգիս փոքր ի շատէ դաղափար մը տալէս վերջ, կ'ուզեմ՝ ըստ կարողութեան իմում՝ մինչ ցարդ ունեցած փորձառութեամբս մեր գաւառացի հայ եղբարց բարոյական, նիւթական և քաղաքական ցաւալի վիճակին վրայ դիտողութիւն մը ընել ընդ նմին և առաջարկ մը ի դարման»:

«Ա. գաւառացի հայոց՝ մանաւանդ գիւղացւոց բարոյական, այսինքն՝ մտքի լուսաւորութեան և սրտի կրթութեան վիճակը խեղճ և խիստ խաւարամած կացութեան մէջ է. այնպէս որ ընդհանրապէս զուրկ են դաստիարակութեան լոյսէն, զուրկ քրիստոնէական կրօնի լոյսէն»:

«Բ. գաւառացի հայոց քաղաքական վիճակը որ և է կերպիւ նպաստաւոր չէ. մարդ որչափ գաւառաց խորերը յառաջանայ, այնչափ առաւել զգալի կերպով կը տեսնէ թէ՛ ժողովուրդը որչ օ-

բէնք գիտէ, ո՛չ իւր իրաւունքը և ո՛չ վայն պաշտպանելը, որոյ հետեւանքը եղած է հայ անհատի մը տաճիկ անհատէ մը մահու չափ սոսկալ, ըստըրկանալ և լռիկ քննիկ հարստահարուիլ ու ազդեցութեան տէր անձանց ձեռքը գերի ու գործիք ըլլալ»:

«Գ. Նիւթական վիճակն ալ անկեալ է և դէպի աղքատութիւն և ի թշուառութիւն յառաջանալու վրայ են հետզհետէ»:

«Վաւառաց այս կացութիւնը մեծապէս բազդաւոր ըրած է բողոքական քարոզչաց, որոնք ժողովուրդը այս վիճակին մէջ գտնելով, իրենց փաղաքուշ խօսքերով և կեղծաւոր վարմունքներովն կը յաջողին իրենց դարանին մէջ ձգել և ճշմարտութենէ և ուղղութենէ կը մոլորեցնեն. ի վնաս սիրելի ազգիս և եկեղեցւոյ»:

Եւս ամեն չարեաց դարման կ'առաջարկեմ.

Ե. վիճակաց բոլոր գաւառագլուխ քաղաքներու մէջ երկսեռ մանկաւոյն մտաց և սրտի լուսաւորութեան և կրթութեան համար բարեկարգ վարժարաններ ունենալ:

Բ. վիճակաց թեմական բոլոր գիւղօրէից մէջ նախակրթական վարժարաններ և ուսեալ ու բանիբուն քահանայներ ունենալ:

Գ. իւրաքանչիւր վիճակաց, մանաւանդ ընդարձակ վիճակներու մէջ Կարողութեան պաշտօնով գտնէ առնուազն երեքական վարդապետ ունենալ, որ ընդ միշտ շրջելով միմիայն Ս. Եւտարանը քարոզեն և գիւղական դպրոցաց յառաջադիմութեան հոգ և խնամք տանին, օրպէս զի գաւառ

ռացի հայ եղբարք ըստ Լեւտարանի կրթուելով
և դաստիարակուելով, գիտնան իրենց կոչումը,
պարտքն և իրաւունքը և զայն պաշտպանելը:

4. Նոյն հեղինակի Ե. գործը:

Լրտօսը Հայաստանի կամ տեղեկագիր Բա-
լուայ, Քար բերդու, Չար-սանճաքի, Ճ'ապաղ-
ջուրի և Երզնկայու: Յաւելուած ըստ խնդրանաց
ազգասիրաց՝ Խիղան գաւառ: Կ. Պոլիս:

Թէ՛ տպարանն և Թէ՛ գրքի տպագրութեան
թուականն նշանակուած էէ, սակայն մի «երկու
խօսք» բացատրութիւնից յառաջաբանի նախըն-
թաց երեսում երևում է, որ գիրքը տպագրու-
թեան է յանձնուած 1878 թուականից յետոյ:

Լսյա յոյժ օգտակար հրատարակութեան վերայ
մեր ընթերցողաց մի պարզ գաղափար տալու հա-
մար, նպատակայարմար դատեցինք ամբողջ յա-
ռաջաբանն արտատպել:

«Լրտասուք և թշուառութիւն ահաւասիկ այս
երկու ցաւալի բաւերն են ընտրուած ներկայ եր-
կասիրութեանս կէտ նպատակին՝ որուն համար
ցաւօք սրտի պիտի խօսիմ, և որ աւելի ցա-
ւալին է անուրանալի ճշմարտութիւններ պիտի
լսէ աղնիւ ընթերցողը. երբ տեղեկագրոյս մի
քանի երեսները ընթեռնու հազիւ իւր արցունքը
բռնելով պիտի շարունակէ ընթերցումը. տեսնե-
լով իւր համարին եղբարց և որդւոց անտանելի
և անկրելի թշուառ վիճակը, որ կարծես լռիկ
մնջիկ դատապարտեալ է ի յայն, յիրաւի մարդ
կապշի կը մնայ, երբ ի մօտոյ իւր աչքերովը
կը տեսնէ և ականջներովը կը լսէ և ձեռքերովը

կը շօշափէ այս ամէն թշուառութիւնները որ միշտ
հանապազ տեղի կունենան: Տեւորք իմ և եղ-
բարք, անտանելի է այս ցաւը. չկրնար ըլլալ
մարդկային էակ մը որ կարողանայ դիմանալ սոյն
բաղմատեսակ հարստահարութեանց. զարմացումէ
յապշութիւն կը կրթի մարդ երբ պահ մը մտա-
ծէ, թէ Հայաստան դեռ եւս ունի իւր մէջ կան-
գուն մնացած մէկ քանի միլիօն անհատ, 700
տարուան անտանելի հարստահարութեանց և թըշ-
ուառութեանց տառապանացը մատնուած. անիմա-
նալի է այս գաղտնիք՝ սակայն եւս անուրանալի
ճշմարտութիւն. խանգարեալ մտաց երեւակայու-
թիւն և կամ ցնորք չեն որ պիտի ընթեռնուք,
բաւական է որ անգամ մը միայն ճանապարհոր-
դէք ի Հայաստան և պիտի տեսնէք հոն մէկ կող-
մանէ Հայրենիք, Աղբ, Կրօնք և Եկեղեցի ոտ-
նակոխ և անարգեալ, կենաց և ընչից անապա-
հով վիճակ, պատուոյ բռնաբարումն, բանտ, տան-
ջանք և մահ. իսկ միւս կողմանէ տգիտութիւն,
անմիաբանութիւն, եղբայրատեցութիւն և մատ-
նութիւն, որոնք ձեռք ձեռքի տուած՝ ամէն օր
Հայութեան արիւնը կը ծծեն, երկրագունդէն
Հայ անունը ջնջելու համար. մէկ խօսքով,
տեւորք իմ և եղբարք, օտարը կը հարուածէ Հա-
յը: Հայը կը հարուածէ Հայը, միացուր ասոնց
նաև տխուր աւերակաց բեկորներ, այսինքն՝ եկե-
ղեցեաց, պալատանց, վանուց և զանազան հոյա-
կապ հնութեանց, որ կողմ դարձնես աչերդ՝ ան-
պատճառ մի քանին աչերուդ կը հանդիպի, ներ-
կայ վիճակը աչքիդ առջև ունենալով անցելոյն

վրայ տխուր հայեցուածք մը կը դարձնես և սըր-
տէզ ինքնաբերաբար ԾՏ մը կարձկի, յետոյ կըս-
կըսիս յաչս արտասուս պահ մը անցեալը մտածել
և ըսել ինքնիրենդ, «հոս քալեցին և այժմ կը
ննջեն իմ նախնիքներս, իմ հուժկու թափառո-
ներս, ահաւասիկ այս կիսակործան շէնքերը ա-
նոնց յիշատակաց մնացորդներն են», սակայն այս
վայրկենական մտածումդ շուտով կը ցնդի, որով-
հետև ներկային համար ցնորք մը կը համարուի,
և այս տիեզերահռչակ Հայը, որ ատենօք բոլոր
աշխարհ զարմացուցած է իւր գիտութեամբն և
վսեմ հանճարովը՝ ցուրտ գերեզմանաքարի մը
ներքեւ ամփոփեալ կը տեսնես. ինչո՞ւ, վասն զի
չուզեց սիրել, չուզեց միանալ, չուզեց ազգայ-
նութեան կապն ամուր պահել. միշտ իրեն հա-
ճելի երեւցան խեղ, ատելութիւն, նախանձ և
անմիաբանութիւն, որք ի հիմանց քանդեցին աղ-
գութեան տունն ու ոգին: Չեմ ուզեր նաև հոս
զանց առնել կղերականաց մասին համար ալ մի
քանի խօսք ուղղել: Հայութիւնը որ դարերէ
հետէ թէ՛ ներքին երկպառակութեամբ և թէ՛ ար-
տաքին անխնայ հարստահարութեամբ տգիտու-
թեան և յետին ծայր աղքատութեան, խաւարի և
անել լարիւրինթոսը գահավիժած է, եթէ ժա-
մանակին ունենար անձնուրաց, քաջարի և աղ-
գասէր հոգեւոր հովիւներ՝ գոնէ ներքին երկպա-
ռակութիւնը իւր ամեն ճիւղերով այս աստիճան
առաջ գացած չէր ըլլար, որով մեկին բարձրամբը
միւսն ալ կանհետանար: Ըսոնք որոնք ցաւ ի
սիրտ գրած եմ, ես ինքս փորձով համոզուած եմ,

Թէ՛ւ բացառութիւններ պակաս չեն. Ազգին, Եկեղեցւոյն և Հայրենեաց համար աշխատող եկեղեցականներ աւանդ որ սակաւաթիւ են:

Արդ, տե՛ւրք իմ և եղբարք, ներկայ աշխարհիկ լեզուաւ հինգերորդ երկասիրութիւնս, որ Բալուի և շրջակայ քաղաքաց և գիւղօրէից կենդանի պատկերը խիստ խնամօք կը տեղեկագրէ՝ կարդալով զանոնք՝ ջանանք և աշխատինք աջակցիլ մեր ամենասիրելի և անզուգական Բարձր. Սրբազան Տէր Տէր Աբրահմայ Պատրիարք Հօր աշխատանացը, և ի շնորհս ուսման և կրթութեան սրբել Հայաստանի արցունքը, ծաւալելով անդ դպրոցներ առ ի բարգաւաճումն մանկուոյն Հայաստանի և առ ի զարգացումն Հայոց մեծ Ազգիս»):

Պիտքը 16 ածալ է և պարունակում է իր մէջ 202 երես. սակաւաթիւ. արժէ մօտաւորապէս 50 կոպէկ:

Ով որ հետաքրքրվում է հայի ժամանակակից իրական կեանքով, նորա խորհրդաւոր նիստ ու կացով ու բնակած հայկական վայրերով, մի խօսքով՝ ով որ հետամուտ է արգի հայ կեանքի հոսանքին, անտարակոյս, նա կշտապէ ժամ առաջ ձեռք բերել Հայ Եկեղեցւոյ այս պատուական պաշտօնեայի բոլոր հրատարակութիւնք, որոնք անկեղծ զգացմունքից ու սուրբ նախանձից ներշնչուած հայութեան մի մասի ճշգրիտ նկարագիրն են երեւան հանում հայ մարդի առաջ:

Թէ՛ եւրոպական պարզ գիտութիւնը, զարգացումը երբ որ ընկնում է մի լաւ, պարարտ հողի

վրայ, ինչ հրաշքներ է գործում, դա, կարծում ենք, յայտնի է ամենուն և թէ այս բաւականին ճշտօրէն ապացուցանում է Պօղոս վարդապետը իր գրական գրական գործունէութեամբ, որը նուիրուած է Հայաստանի մի մասի ուսումնասիրութեանը. թէև իսկապէս այսպիսի ուրախալի երեւոյթները մի բացառութիւն է Հայոց նման մի ազգի համար, որոյ ձգտումները թէ՛ անցեալում և թէ՛ ներկայում ընդհանուր առմամբ օտարամոլութիւնն է եղած նոյն իսկ իր հայրենիքում և իր պատմութեան մէջ:

5. Վաղթականք Հայոց: Վրեց Եսայի վարդապետ Վ Լոնդոնի Լպահոնեաց: Վործ Լ: Պոլիս. 8°. տպագրութիւն (). Խօճասարեան: Տպագրութեան թուականն յայտնի չէ. գիրքը պարունակում է 53 երես:

«Սոյն փոքրիկ պատմութիւնն, այսպէս է սկըսվում աղբը, մեր հայրենակից հայ գաղթականաց կրած աղէտից ճիշդ նկարագիրն է, որոյ տողերը աղի արտասուաց մէկ մէկ պղտոր աղբերակներ են այն սրտերուն համար, որոնք հայութեան սուրբ սիրոյ զգացումներ կը կրեն»:

«Սուրն և սոփն շատ հեղ ի սաստ հարուածեր են զՀայաստան, սակայն չեն կարողացեր Հայ ազգի սիրտն ու սէրն իսպառ իսկել կտրել Հայոց ազնիւ աշխարհէն. «օտար հողը զհայն իւր կեանքէն կը զրկէ. հայն միայն ի Հայաստանն կարող է իրեն շունչը շնչել...»: Վաղթականութիւնը տեղի է ունեցել 1842 սեպտ. 23 Սասնոյ, Խոյթայ, Բզնունեաց, Խլաթայ, Հացեաց, Հաշ-

տենից, Հարբայ, Եպահոնեայ, Խնուսայ և շատ մը ուրիշ տեղերէ։ Սոքա թուով մօտ 10,000 տուն անկարող լինելով գիմանալ սովին, որ հրեղէն սուրի պէս աջ և ահեակ կտրելով կը կոտորէր իրենց ազգակից եղբարցը, միաձայն հաւանութեամբ գաղթած են Երարատեան աշխարհը։


6. Գեղջկական հարսանիք ի Հայաստան։ Ե. Կ. Պէյլէրեան։ Պոլիս ի գործարանի Օլարդարեան. 1870. 8^o. 63 էրեսից. 10—15 կոպէկ։

«Նորը անվրէպ աչօք թափանցենք Հայաստանի մինչև այն խաւարակուռ խորշերը, ուր տգիտութիւնն ու ժամանակը ի միասին ընկերանալով զարմանալիքներ են կազմակերպած, պիտի տեսնենք որ հնաւանդ սովորութիւններէն դեռ մնացորդներ կը գտնուին, սովորութիւններ, որք նըւազ հաճելի պէտք չեն ըլլալ բոլոր հետաքրքիր ազգայնոց։ Կ'անցնի ներկայն, կ'անցնին նաև իրեն հետ այս հինաւուրց սովորութիւնները, բայց երբ սոքա տետրակաւ մը ի լոյս ածին, յիշատակ կըլլան ապագային»։

Գրքցի վերջին էրկու թերթերը հրատարակել «գիտողութիւնքն» են պարունակում։

Խմբագրող-հրատարակող

ԽՈՐՈՎՅՆ Ծ. ՎԱՐԴ. ՍՏԵՓԵՆԻ՝



Дозволено цензурою. С.-Петербургъ, 26 февраля 1887 года.

Типографія И. Н. Скороходова (Надеждинская, № 39).

Այս համարը թողնուած է անսխալ ճշգրտութեամբ և ունի իրաւունքը վերագրելու համար. խնդրուած չի ըլլալ որ ուրիշ լէտիւն, որ անսխալ խնդրի հրատարակուի։ Ա. Գ.

աւո

00

ռե

ոո

ռե

Ե.

սր

։

ա

ի

ով

ա

ա

ը

ի

ի

յ

սկ

կ

։

աւո

բ

...

ԲՈՎԱՆԳԵԿՈՒԹԻՒՆ

Ե. գ Լ Բ

	Երև.
1. Գպրոցի ոգին	1
2. Հնդկաստանի և Իրմանիոյ հայեր . . .	7
3. Լազիստանի հայեր	13
4. Մի երկու խօսք Տրապիզոնի թեմիկրթա- կան վիճակի առթիւ	15
5. () տարակրօն հաստատութիւններ կիլի- կեայում	17
6. Թուրքիոյ և առանձինն Կոստանդնուպոլ- սոյ հայ ժողովրդեան արդի վիճակը .	22
7. «Ազգաբար» անդրանիկ հայ ամսագիրը և նրա խմբագիր Յարութիւն քահանայ Շմաւոնեան	26
8. Հայաստանի աշխարհագրական և ժողո- վրդագրական մատենագրութիւն	31

Տարեկան բաժանորդագինն է երեւոյսի կան-
խիկ:

